



ԱՆՈՏԱՑԻԱ

Վարդան Ուռուտյան, Ջարուհի Սուրադյան
Երևանի գինու ակադեմիա (EVN Wine Academy),
Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE)
Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ANAU)

Հայաստանի ապագա գինեգործներին անհրաժեշտ հմտությունները, որակները և փորձառությունը

Հայաստանում գինեգործարանների մասնագիտական պահանջների և գոյություն ունեցող կրթական ծրագրերի կամ ուսումնական պլանների միջև կան խորը անհամապատասխանություններ: Այդ կրթական ծրագրերի կազմման կամ ուսումնական պլանների զարգացման գործում գինեգործարանները չեն ունեցել կամ չունեն որևէ ներդրում: Մի կողմից գինու արդյունաբերությունը աճ է արձանագրում, և ոլորտում առկա է բարձրակարգ գինեգործների բարձր պահանջարկ, իսկ մյուս կողմից շրջանավարտների հմտությունները և գիտելիքները չեն բավարարում գինեգործական ընկերություններին: Տեխնոլոգիական կրթությունը պետք է լինի ժամանակին համընթաց և բավարարի գործատուների կարիքները: Ուստի, ոլորտի ընկերությունները պետք է ակտիվ մասնակցություն ունենան ուսումնական պլանների կազմման կամ բարեփոխման աշխատանքներում:

Հետազոտությունը նպատակ է հետապնդում գինեգործական ընկերություններին ներգրավել գործող ուսումնական պլանների արդիականացման և բարեփոխման աշխատանքներում՝ բացահայտելով գինեգործության կրթական ծրագրերի հարցում գործող ընկերությունների ունեցած նախընտրությունները: Ուսումնասիրությունը բացահայտում է այն հմտությունները, կարողությունները և փորձառությունը, որ գինեգործարանները ակնկալում են տվյալ ընկերություններում ապագա գինեգործ-տեխնոլոգներ դառնալու ներուժ ունեցող նոր աշխատակիցներից:

Սույն ուսումնասիրության սևեռակետը գինեգործության մասնագիտության կրթական ծրագիրը կամ ուսումնական պլանն է: Հետազոտության նպատակներից մեկն էլ հայաստանյան գինեգործարանների նախընտրությունները քանակական վերլուծության ենթարկելն էր՝ ապագա գինեգործ-տեխնոլոգների պատրաստմանն ուղղված կրթական ծրագրերի տեսակետից: